

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
25/01/2011թ թիվ 1-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«24» փետրվարի 2011թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

----- Արթուր Չավադյան

----- Անդրանիկ Նորեկյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-022

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ**

(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ)

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) անդամ ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ ընկերություններ) Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղ բացելու կամ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու պայմանագրեր կնքելու (արդեն գործող պայմանագրերում նման գործառնություններ նախատեսելու) դեպքում պարտավոր են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) համապատասխան մասնաճյուղի (ապահովագրական գործակալի) գրանցման (հաշվառման կամ ապահովագրական գործակալների ռեգիստրում առկա տեղեկատվության փոփոխման) մասին տեղեկանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին հայտնել Բյուրոյին:

2. Սույն կանոնների 1-ին կետով նախատեսված ծանուցումը պետք է պարունակի գրանցված (հաշվառված) մասնաճյուղի (գործակալի) վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) անվանումը (ֆիզիկական անձ ապահովագրական գործակալների դեպքում՝ անունը, ազգանունը),

2) Կենտրոնական բանկում գրանցման (հաշվառման) վկայականի համարը և տրման ամսաթիվը,

3) գործունեության հասցեն, աշխատանքային օրերն ու ժամերը,

4) կապի տվյալները՝ հեռախոսահամար, ինչպես նաև էլեկտրոնային հասցե և ինտերնետային կայքի հասցե (առկայության դեպքում):

3. Ընկերությունները Բյուրոյին հայտնում են նաև սույն կանոնների 2-րդ կետում նշված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին՝ այդ փոփոխությունների մասին տեղեկանալու պահից՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Ընկերությունները Կենտրոնական բանկում գրանցված իրենց մասնաճյուղի գործունեությունը սահմանված կարգով դադարեցնելուց, ինչպես նաև ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձի հետ կնքված պայմանագիրը դադարեցնելուց (դրանում ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալի գործառնությունների իրականացման իրավունքը դադարեցնելուց) հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, հայտնում են Բյուրոյին:

5. Սույն կանոններով նախատեսված տեղեկությունները ընկերությունների կողմից Բյուրոյին ուղարկվում են Սի Բի Էյ նեթ համակարգով, իսկ դրա չգործելու դեպքում՝ փոստային եղանակով կամ առձեռն հանձնելու միջոցով:

6. Մինչև սույն կանոններն ուժի մեջ մտնելը ընկերությունների կողմից բացված մասնաճյուղերի, ինչպես նաև ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ սույն կանոնների 2-րդ կետով սահմանված տեղեկություններն ընկերությունների կողմից Բյուրո են ներկայացվում սույն կանոններն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: